«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 98-Լ

ք. Երևան 09 հոկտեմբերի 2024թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ՝ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետի և Ինստիտուտի Գիտական Խորհրդի աշխատակարգի 20-րդ կետի 15-րդ ենթակետի, 77-րդ և 78-րդ կետերի դրույթներով՝ Ինստիտուտի Գիտական խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Որակի ապահովման՝ 2024-2025 ուսումնական տարվա ներքին աուդիտի ծրագիրը և ժամանակացույցը» համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված
«ՀՖԿՍՊԻ» Հիմնադրամի
Գիտական խորհրդի
01.10.2024թ N 98-Լ որոշման

**ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**
**ԾՐԱԳԻՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
**2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

**ԱՈՒԴԻՏԻ ՈԼՈՐՏԸ" Մասնագիտության կրթական ծրագրեր (ՄԿԾ) և դասընթացներ, դասավանդման, ուսուցման և գնահատման գործող համակարգը:**

**Նպատակը"**

Ինստիտուտի հավատարմագրման փորձագիտական զեկույցում ներկայացված խնդիրների համատեքստում վերլուծել ՄԿԾ-ների համապատասխանությունը սահմանված պահանջներին և չափանիշներին:

**Խնդիրները.**

1) Ծանոթանալ Ինստիտուտի ՄԿԾ-ների առանձնահատկություններին
2) Ուսումնասիրել ՄԿԾ փաթեթները
3) Վեր հանել հիմնական խնդիրները և հնարավորության դեպքում առաջարկել դրանց լուծման ուղիներ
4) Առանձնացնել տարբեր ամբիոնների հաջողված փորձը և համապատասխան խորհրդատվությունների և փորձի փոխանակման միջոցով տարածել այլ ամբիոններում
5) Ստեղծել արդյունավետ համագործակցության հիմքեր Որակի ապահովման բաժնի (ՈԱԲ) և ամբիոնների միջև՝ նպաստելով համատեղ աշխատանքային առողջ մթնոլորտի ձևավորմանը:

**Աուդիտի իրականացման ձևաչափը"**

- Ըստ համաձայնեցված ժամանակացույցի կատարել այցելություններ ամբիոններ
- Դիտարկել ամբիոններում առկա ՄԿԾ փաստաթղթային փաթեթները
- Անցկացնել ֆոկուս խմբային քննարկումներ ամբիոնների անձնակազմի հետ
- Կազմել աուդիտի համապարփակ հաշվետվություն՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առանձին հաշվետվություն ռիսկային գնահատված ՄԿԾ-ների վերաբերյալ:

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ[1]

| Հ/Հ | Ֆակուլտետներ / Ամբիոններ | Ժամկետ |
|---|---|---|
| | Մարզամանկավարժական ֆակուլտետ | |
| 1. | Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոն | Առաջին կիսամյակ |
| 2. | Ֆուտբոլի ամբիոն | |
| 3. | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոն | |
| 4. | Մարզախաղերի ամբիոն | |
| 5. | Հ. Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոն | |
| 6. | Հ. Թոփալյանի անվան ցիկլիկ մարզաձևերի ամբիոն | |
| 7. | Ֆիզ. դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոն | |
| | Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետ | |
| 8. | Ֆիզիկական վերականգնման ամբիոն | Երկրորդ կիսամյակ |
| 9. | Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոն | |
| 10. | Ա. Չատինյանի անվան սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոն | |
| 11. | Ա. Լալայանի անվան սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոն | |
| | | |
| 12. | Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոն | Երկրորդ կիսամյակ |
| 13. | Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոն | |

[1] *Ժամանակացույցում նշված ժամկետները ենթակա են առավել հստակեցման ֆակուլտետների և ամբիոնների հետ փոխադարձ համաձայնեցման արդյունքում*